ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐԹԵՄԲԵՐԳԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ

Մայիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրթեմբերգի շրջանի Ավետարանական-լյութերական Եկեղեցու հոգեւոր սպասավորների պատվիրակությանը՝ գլխավորությամբ վերապատվելի Մանֆրեդ Վագների եւ ուղեկցությամբ Տ. Սերովբե վարդապետ Իսահակյանի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց, որ Գերմանիայի Հայոց թեմի աջակցությամբ կայացավ այս հանդիպումը, ապա անդրադարձավ Հայ Եկեղեցու բազմադարյա պատմությանն ու առաքելությանը: «Մեր Եկեղեցին բազում փորձություններ ու դժվարություններ է հաղթահարել անցյալում եւ, կարելի է ասել, որ մեր ժողովրդի հետ ունեցավ իր Գողգոթան՝ հանուն Տիրոջ նկատմամբ իր հավատքի: Սակայն ունեցավ նաեւ իր հարությունը՝ նույն հավատքի շնորհիվ: ...Փառք Բարձրյալին, Հայ Եկեղեցին ներկայիս վերածնունդ է ապրում»,- նշեց Հայոց Հայրապետը: Ապա Նորին Սրբությունը վերհիշեց իր ուսումնառության տարիները Վիեննայում եւ հովվական ծառայությունը Գերմանիայում:

Իր խոսքում վեր. Մանֆրեդ Վագներն երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Սլովակիայի Ավետարանական-լյութերական Եկեղեցու եպիսկոպոսաց խորհրդի ղեկավար Միլոշ Կլատիկը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԵԿՆՈՒՄ

Մայիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկշաբաթյա աշխատանքային այցով մեկնեց Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի Հայոց թեմեր:

Այցի ընթացքում Փարիզում եւ Լոնդոնում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ թեմական առաջնորդների, թեմական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ